

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի 02.03.2017 թ. թիվ 157 Լ/Գ հրամանի



«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ECTS ՀԵՆՔՈՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ,

ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՄՇԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ԸՆԹԱՅԱԿԱՐԳ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 1, 23.02.2017թ.

Փոփոխվել է՝

Արձանագրություն թիվ 7, 27.01.2022թ.

Առ 02.02.2022թ. փոփոխություններով

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետև Համալսարան) ECTS հենքով կրթական ծրագրերի և մասնագիտությունների ուսումնական պլանների մշակման, հաստատման, մշտադիտարկման և գնահատման ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ) մշակվել է՝ համաձայն «Կրթության մասին», «Բարձրագույն և հետրուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ՀՀ կառավարության 2005 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 2307-Ն որոշման, Համալսարանի կանոնադրության, և հիմնված է Համալսարանում, ինչպես նաև ՀՀ և ԱՊՀ այլ երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունված և կիրառվող կանոնակարգերի և կարգերի վրա:

1.1 Ուսումնական պլանը նախատեսում է.

- ա) ուսումնասիրման հաջորդականությունը՝ հիմնված նրանց տրամաբանական կապի վրա,
- բ) առարկաների ռացիոնալ բաշխումը կիսամյակներում՝ ուսանողի հավասարաչափ ծանրաբեռնվածությունն ապահովելու նպատակով,
- գ) Համալսարանի կադրային ներուժի և նյութատեխնիկական բազայի արդյունավետ օգտագործումը:

1.2 Ուսումնական պլանը որոշում է տվյալ մասնագիտության կամ ուղղության ուսումնական գործընթացի կառուցվածքը՝ ուսումնական առարկաների ցանկը և ծավալները, նրանց դասավանդման հաջորդականությունը, պրակտիկաների տեսակները և տևողությունը, պարապմունքների անցկացման ձևերը, գնահատման ձևերը և այլն:

1.3 Համալսարանում կիրառվում են պլանների հետևյալ տեսակները.

- ա) բազային ուսումնական պլան (կրեդիտային հենքով),
- բ) աշխատանքային ուսումնական պլան (կրեդիտային հենքով):

1.4 Բազային ուսումնական պլանը յուրաքանչյուր ֆակուլտետում ուսումնական գործընթացի կառուցվածքը որոշող հիմնական փաստաթուղթն է: Բազային ուսումնական պլանում ներկայացվում են ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր բաղադրիչները (դասընթացները, պրակտիկաները, կուրսային, ավարտական աշխատանքները, քննությունները, ստուգարքները, ինքնուրույն աշխատանքը)՝ յուրաքանչյուր բաղադրիչի համար ժամաքանակով և կրեդիտներով արտահայտված ուսանողների լսարանային և արտալսարանային ինքնուրույն բեռնվածությամբ:

1.5 Բազային ուսումնական պլանը կազմվում է բակալավրի կրթական ծրագրով ուսուցման առկա համակարգի համար 4 տարի, հեռակա ուսուցման համակարգի համար՝ 5 տարի տևողությամբ, իսկ մագիստրոսի կրթական ծրագրով ուսուցման առկա համակարգի համար 1.5-2 տարի, հեռակա ուսուցման համակարգի համար՝ 2.5 տարի տևողությամբ:



1.6 Աշխատանքային ուսումնական պլանը կազմվում է Համալսարանի Կրթական գործընթացների կառավարման բաժնի կողմից՝ բազային ուսումնական պլանի հիման վրա, և ծառայում է տվյալ ուսումնական տարվա ուսումնական գործընթացի ձևավորմանը և դասախոսների աշխատանքային ծանրաբեռնվածությունը հաշվարկելու համար:

1.7 (կետը հանված է արձ. թիվ 7 27.01.2022 թ. հրաման թիվ 126Ն/ Ս02.02.2022թ.)

1.8 Աշխատանքային ուսումնական պլանում և ուսումնական գործընթացի ժամանակացույցում բացառիկ դեպքերում, պայմանավորված ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմամբ, ռեսուրսների ճիշտ օգտագործման խնդրով, հնարավոր է ֆակուլտետների գիտական խորհուրդների որոշմամբ դասընթացների ուսումնասիրման կիսամյակի տեղաշարժ (տվյալ ուսումնական տարվա կտրվածքով), ինչպես նաև դասախոսություն/սեմինար, գործնական, լաբորատոր պրակտիկում աշխատանքների հարաբերակցության փոփոխություն:

1.9 (կետը հանված է արձ. թիվ 7 27.01.2022 թ. հրաման թիվ 126Ն/ Ս02.02.2022թ.)

1.10 (կետը հանված է արձ. թիվ 7 27.01.2022 թ. հրաման թիվ 126Ն/ Ս02.02.2022թ.)

II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.1 Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի բազային ուսումնական պլանները բաղկացած են հետևյալ բաժիններից.

ա) վերնագիր,

բ) ուսումնական գործընթացի ժամանակացույց (տեսական ուսուցում, քննաշրջան, պրակտիկաներ, պետական որակավորում, արձակուրդներ),

գ) ուսուցման տևողությունը շաբաթներով,

դ) ուսումնական գործընթացի պլան,

ե) այլ (կուրսային աշխատանք, պրակտիկա) ավարտական աշխատանք և (կամ) մագիստրոսական թեզի և ձևակերպում և պաշտպանություն:

2.2 Վերնագրում նշվում են Համալսարանի և ֆակուլտետի անվանումները, մասնագիտության (բաժնի) ծածկագիրը և անվանումը, շրջանավարտի որակավորումը, ուսուցման ձևը (առկա, հեռակա) և ուսման տևողությունը:

2.3 Ուսումնական գործընթացի ժամանակացույցում տարբեր խորհրդանիշներով նշվում են տեսական ուսուցման, պրակտիկաների, քննաշրջանների, ավարտական որակավորման և արձակուրդների օրացուցային օրերը և շաբաթները:

Կիսամյակում ուսումնական շաբաթների թիվը, որպես կանոն, կազմում է 20 շաբաթ: Ուսումնական գործընթացի ժամանակացույցը կազմելիս պետք է ընդունել տարվա շաբաթների թիվը (52), արձակուրդներին տրամադրվող ժամանակը՝ առնվազն 7 շաբաթ, որից ձմեռային արձակուրդների համար պետք է նախատեսել 2 շաբաթից ոչ պակաս ժամանակ:

Առկա ուսուցման համակարգի բակալավրիատի բոլոր կուրսերի և մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի մեկից:

Հեռակա ուսուցման համակարգի ուսումնական տարին սկսվում է նոյեմբերից:

Մագիստրատուրայի առաջին կուրսի ուսումնական տարվա սկիզբը որոշվում է համաձայն



տվյալ ուսումնական տարվա համար մագիստրատուրայի ընդունելության ժամանակավոր կարգի:

2.4 Ուսուցման տևողությունը ներկայացնելիս ուսումնական ժամանակը հաշվարկվում է շաբաթներով՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար՝ հաշվի առնելով տեսական դասընթացները, պրակտիկաները, քննաշրջանները, ավարտական որակավորման աշխատանքները, քննությունները և արձակուրդները:

2.5 Ուսումնական գործընթացի պլանը ներառում է բոլոր դասավանդվող առարկաները՝ բաժանված ըստ կրթամասերի (ներառյալ կամընտրական առարկաները), դրանց հատկացվող ընդհանուր ժամաքանակը (լսարանային և արտալսարանային), գիտելիքների ստուգման ձևերը, առարկային հատկացվող ECTS կրեդիտները, դասավանդման կիսամյակը, շաբաթական ժամաքանակը:

Մարմնակրթության դասաժամերին կրեդիտային միավորներ չեն հատկացվում:

2.6 Բակալավրիատի համար պարտադիր են համարվում դասընթացների հետևյալ կրթամասերը.

- 1) աշխարհայացքային կրթամաս,
- 2) հաղորդակցական կրթամաս,
- 3) առողջապահական և բնագիտական կրթամաս,
- 4) ընդհանուր մասնագիտական կրթամաս,
- 5) հատուկ մասնագիտական կրթամաս,
- 6) հետազոտական կրթամաս:

2.7 Մագիստրատուրայի համար պարտադիր են համարվում հետևյալ կրթամասերը.

ա) մագիստրոսի (համալսարանական) որակավորմամբ.

- 1) ընդհանուր կրթամաս,
- 2) մասնագիտական կրթամաս,
- 3) գիտահետազոտական կրթամաս.

բ) մագիստրոսի (մանկավարժական) որակավորմամբ.

- 1) ընդհանուր կրթամաս,
- 2) մասնագիտական կրթամաս,
- 3) մանկավարժահոգեբանական կրթամաս,
- 4) գիտահետազոտական կրթամաս:

2.8 Բակալավրիատի «Աշխարհայացքային և հաղորդակցական» կրթամասերի ընդհանուր աշխատատարությունը պետք է կազմի մինչև 32 կրեդիտային միավոր, որից նվազագույնը 20% -ը պետք է հատկացվի կամընտրական դասընթացներին:

«Աշխարհայացքային և հաղորդակցական» կրթամասերի պարտադիր դասընթացներից են «Հայոց լեզու և գրականություն (խոսքի մշակույթ)» (4 կրեդիտ), «Մասնագիտական հոսանք լեզու» (6



կրեդիտ), «Մասնագիտական օտար լեզու» (6 կրեդիտ), «Հայոց պատմություն» (4 կրեդիտ), «Փիլիսոփայություն» (4 կրեդիտ), «Կիրառական տեղեկատվական համակարգեր ըստ ոլորտի» (2 կրեդիտ): Եթե այդ դասընթացներից որևէ մեկը մաս է կազմում ընդհանուր մասնագիտական կրթամասի, ապա դրան հատկացված կրեդիտային միավորները (ժամաքանակը) կարելի է վերաբաշխել այդ կրթամասի այլ առարկաների վրա:

«Աշխարհայացքային և հաղորդակցական» կրթամասերի կամընտրական դասընթացներն են՝ «Մշակութաբանություն», «Տրամաբանություն», «Սոցիոլոգիա» (2 կրեդիտ), «Իրավագիտություն», «Քաղաքագիտություն», «Տնտեսագիտություն» (2 կրեդիտ), «Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն)» (3 կրեդիտ):

2.9 Յուրաքանչյուր մասնագիտության համար կրթամասի կամընտրական դասընթացները որոշում են ֆակուլտետները՝ համապատասխան ամբիոնների առաջարկությամբ:

2.10 Բակալավրիատի ոչ մասնագիտական բաժինների «Առողջապահական և բնագիտական կրթամասի» աշխատատարությունը մինչև 10 կրեդիտ է: Պարտադիր դասընթացներից են «Էկոլոգիա և բնապահպանության հիմնահարցեր» (2 կրեդիտ), «Քաղաքաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» (2 կրեդիտ): Այս կրթամասի կամընտրական դասընթացներն են՝ «Բժշկագիտության հիմունքներ և առողջության պահպանում» /«Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն» (2 կրեդիտ):

2.10.1 Բակալավրի մանկավարժի որակավորմամբ մանկավարժահոգեբանական առարկաների ընդհանուր կրեդիտային միավորը ընդհանուր մասնագիտական կրթամասում 18 կրեդիտ է. պարտադիր են «Մանկավարժություն» (5 կրեդիտ), «Հոգեբանություն» (5 կրեդիտ), «Ներառական կրթություն» (2 կրեդիտ), «Տարիքային ֆիզիոլոգիա» (2 կրեդիտ): Կամընտրական դասընթացներին հատկացվում է 4 կրեդիտ:

2.11 (կետը հանված է արձ. թիվ 7 27.01.2022 թ. հրաման թիվ 126Ն/ Մ02.02.2022թ.)

2.12 2.6-րդ կետի 1-5-րդ կրթամասերում կամընտրական դասընթացների առկայությունը պարտադիր է:

2.13 Մագիստրատուրայի «Ընդհանուր կրթամասի» պարտադիր դասընթացներից է տեղեկատվական տեխնոլոգիաներին վերաբերող մասնագիտական ոլորտի դասընթացը:

2.14 Մագիստրատուրայի «Մասնագիտական կրթամասի» դասընթացները որոշում են ամբիոնները և ֆակուլտետները յուրաքանչյուր մագիստրոսական ծրագրի համար:

2.15 Մագիստրոսական ծրագրի յուրաքանչյուր ուսումնական կրթամասի համար կամընտրական դասընթացների առկայությունը պարտադիր է (30-45%-ի սահմաններում):

2.16 Մագիստրոսական ծրագրի գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը որոշում է համապատասխան ամբիոնը:

2.17 Բակալավրիատի ուսումնական և արտադրական պրակտիկաները, մագիստրատուրայի գիտամանկավարժական (մանկավարժական), արտադրական և գիտահետազոտական պրակտիկաները ներկայացվում են ուսումնական պլանի համապատասխան բաժիններում՝ դրանց հատկացված շաբաթների և ժամաքանակի, ինչպես նաև տվյալ պրակտիկայի անցկացման կիսամյակի նշումով:

2.18 (կետը հանված է արձ. թիվ 7 27.01.2022 թ. հրաման թիվ 126Ն/ Մ02.02.2022թ.)



2.19 Ուսումնական պլանի վերջում տեղ է հատկացվում պատասխանատու անձի՝ ղեկանի ստորագրության համար:

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԿԱԶՄՈՒՄԸ

3.1. Ուսումնական պլանների կազմումը, առանձին բաղադրիչներին ECTS կրեդիտային միավորների հատկացումը, լսարանային և ինքնուրույն աշխատանքների ծավալի որոշումը կատարվում է՝ համաձայն Համալսարանի գիտխորհրդի կողմից 23.02.2017 թ. ընդունված «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման ու հաշվառման կանոնակարգ»-ում ամրագրված դրույթների:

IV. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Մասնագիտության կամ մասնագիտացման ուսումնական պլանը մշակվում է՝ համաձայն համապատասխան պետական կրթական չափորոշիչների, ՀՀ որակավորումների ազգային շրջանակի մակարդակներով սահմանված ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների նկատմամբ ներկայացվող պահանջների:

4.2 Ուսումնական պլաններում ընդգրկվող դասընթացների բովանդակությունը, ծավալը, հաջորդականությունը և ուսումնառության ձևերը պետք է ապահովեն.

ա) մասնագետների հիմնարար պատրաստման գործընթացի շարունակականությունը,

բ) ընդհանուր գիտական և մասնագիտական առարկաների միասնականացումը կրթության հարակից ուղղությունների համար,

գ) ուսումնական և արտադրական պրակտիկաների անցկացման ընթացքում գիտելիքների, կարողությունների և հմտությունների խորացումը և ամրագրումը:


4.3 Բակալավրիատի և մագիստրատուրայի բազային ուսումնական պլանների նախագծերի մշակման համար ուսումնական աշխատանքների գծով պրոոբեկտորի ղեկավարությամբ ստեղծվում են հանձնախմբեր, որոնք կազմում են համապատասխան մասնագիտությունների կրթամասերին հատկացվող կրեդիտների համամասնությունները և այդ կրթամասերի պարտադիր առարկաներն ու նրանց հաջորդականությունը:

4.4 (կետը հանված է արձ. թիվ 7 27.01.2022 թ. հրաման թիվ 126Ն/ Մ02.02.2022թ.)

4.5 (կետը հանված է արձ. թիվ 7 27.01.2022 թ. հրաման թիվ 126Ն/ Մ02.02.2022թ.)

4.6 Բազային ուսումնական պլանների նախագծերը մշակվում են ներդնելուց առնվազն մեկ տարի առաջ:

4.7 Բազային ուսումնական պլանի նախագիծը մշակելիս որպես հիմք ընդունվում է սույն Ընթացակարգի 2-րդ բաժնում շարադրված ուսումնական պլանների կառուցվածքը, ճշտվում են դասընթացների ցանկը և դրանց դասավանդման հաջորդականությունը, չափի են առնվում դասընթացների առանձին կրթամասերին հատկացվող ժամաքանակը, ուսանողի ուսումնական բեռնվածությունը (լսարանային, ինքնուրույն և ընդհանուր), յուրաքանչյուր առարկայի



դասավանդման (դասախոսություններ, գործնական պարապմունքներ, սեմինարներ, լաբորատոր աշխատանքներ, պրակտիկում) և գիտելիքների ստուգման (ստուգաբք, քննություն) ձևերը, կուրսային աշխատանքներ նախատեսող առարկաները, պրակտիկաների տեսակները՝ անցկացման կիսամյակներով և տևողությամբ, վերջնական ատեստավորման ձևերը (ամփոփիչ ատեստավորում, մագիստրոսական թեզ) և այլն:

4.8 Ուսումնական պլանի յուրաքանչյուր բաղադրիչի աշխատատարությունը արտահայտվում է ECTS կրեդիտային միավորներով:

4.9 Ուսումնական պլանի նախագծի առաջին տարբերակը քննարկվում է ամբիոնի ընդլայնված նիստում՝ ղեկնատի, հանձնախմբի և հարակից ամբիոնների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ուսումնական պլանի նախագիծը ընդունվում է ամբիոնի աշխատակիցների ձայների 2/3-ով: Ամբիոնի նիստի որոշմամբ հաստատված նախագիծը ներկայացվում է ֆակուլտետի գիտական խորհուրդ: Վերջինս պարտավոր է երկշաբաթյա ժամկետում քննարկել ներկայացված նախագիծը և տալ իր եզրակացությունը:

4.10 Նախագիծը ֆակուլտետի գիտական խորհրդի եզրակացությամբ ներկայացվում է Համալսարանի գիտական խորհուրդ՝ քննարկման և հաստատման նպատակով: Քննարկման արդյունքում Համալսարանի գիտական խորհրդի կողմից ընդունված վերջնական փաստաթուղթը հաստատվում է ռեկտորի կողմից:

4.11 Հաստատված ուսումնական պլանի մեկական օրինակ պահվում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի մոտ, Համալսարանի Կրթական գործընթացների կառավարում բաժնում, համապատասխան ղեկնատում և ամբիոններում:

V. Ուսումնական պլանների մշտադիտարկման, գնահատման, վերանայման կարգը

5.1 Ուսումնական պլանների արդիականությունը, կրթական բարձր մակարդակը և արդյունավետությունն ապահովելու նպատակով թողարկող ամբիոնները պարտավոր են իրականացնել դրանց մշտադիտարկումը, վերլուծությունը և փոփոխությունների իրականացումը:

5.2 Բակալավրիատի ուսումնական պլանները պարտադիր վերանայվում են 4 տարին մեկ, մագիստրատուրայի պլանները՝ երկու տարին մեկ անգամ:

5.3 Ուսումնական տարվա ընթացքում ամբիոնը պարտավոր է դասալսումների, առարկան պարապող դասախոսների և ուսանողների, գործատուների, շրջանավարտների կարծիքների, պրակտիկաների անցկացման, միջանկյալ քննությունների արդյունքների վերլուծության հիման վրա նախապատրաստել առաջարկներ՝ ուսումնական պլաններում փոփոխությունների և շտկումների վերաբերյալ: Առարկան պարապող և դասալսումներ անցկացրած դասախոսները պարտավոր են իրենց կարծիքները գրավոր ներկայացնել ամբիոնի նիստի քննարկմանը:

5.4 Փոփոխությունների մասին եզրակացություն անելու նպատակով ամբիոնի նիստի որոշմամբ ստեղծվում է հանձնախումբ, որտեղ ընդգրկվում են առաջարկության հեղինակը և 2 առաջատար այլ մասնագետներ: Հանձնախումբը 10-օրյա ժամկետում ուսումնասիրում է ներկայացված առաջարկը և տալիս իր եզրակացությունը փոփոխությունների մասին:

5.5 Ամբիոնի նիստում այդ եզրակացությունը քննարկելուց և ձայների 2/3-ով ընդունվելուց հետո այն ներկայացվում է համապատասխան ֆակուլտետի գիտական խորհրդին ուսումնական պլաններում փոփոխություններ կատարելու նպատակով:



5.6 Ներկայացված փոփոխությունները հաշվի են առնվում ուսումնական պլանների ձևավորման փուլում:

VI.ՈՒՍԱՆՈՂԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ
(հանված է արձ. թիվ 7 27.01.2022 թ. հրաման թիվ 126Ն/Մ02.02.2022թ.)

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը ուժի մեջ է մտնում օրենսդրությամբ սահմանված կարգով:

